Հաստատում եմ

Տնօրեն՝ ----------Հ.Կոստանյան

Ն.Պողոսյան

«----»----------.2022 թ.

Ստուգված է՝

Տնօրենի տեղակալ՝----------

«----».----------.2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Ք. ՎԱՆԱՁՈՐԻ

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑԻ

IX^{Ա} ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿ՝ ԱԻԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ

2022 - 23 ՈՒՍՏԱՐԻ

IX ա ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱՍՂԵԿ՝ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ
2022-23 ՈՒՍՏԱՐԻ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում է 32 աշակերտ, որից 16աղջիկ, 16տղա: Կան բազմազավակ ընտանիքի երեխաներ, միակողմանի ծնողագուրկ, ամուսնալուծված ընտանիքի երեխաներ : Կան տեսողական խնդիրներ ունեցողներ աշակերտներ : Հաշմանդամներ կամ ներառական կրթ. սովորողներ չկան: Չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Առաջադիմությունը բարձր է, թույլ առաջադիմություն ունեն 4 -6 աշակերտներ:

Դասարանը համերաշխ է, կարգապահ, կազմակերպված: Ունենք տաղանդավոր մի շարք աշակերտներ: Դասարանը ակտիվորեն մասնակցում է դպրոցի կյանքին. բացակայությունները քիչ են, հիմնավորված:

Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Դասագրքերի բաշխում, գրքերի, դպրոցական գույքի նկատմամբ հսկողության սահմանում, հերթապահության սահմանում: Վերահսկողություն հաճախումների նկատմամբ՝ բացակայություն, ուշացումներ: Հետևել օրագրերի վարմանը, կարգապահությանը, դասերին պատրաստ հաճախելուն: Ուշադրություն դարձնել երեխաների միմյանց նկատմամբ ունեցած հարաբերություններին, իրազեկել նրանց իրավունքների ու պարտականությունների մասին: Դասարանում ստեղծել փոխադարձ հարգանքի, ուսումնառությանը նպաստող ջերմ մթնոլորտ: Աշակերտներին ներգրավել դպրոցական, արտադպրոցական միջոցառումներին. հաճախակի զրույցներ վարել բարոյական, հայրենասիրական, գեղագիտական, հիգիենայի պահպանման, առողջ ապրելակերպի թեմաներով:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Պատկերացումներ տալ մարդկային գործունեության, ազգային մշակույթի, ժող-ական արժեքների, տարբեր ծիսակատարությունների, տոների ու հանդիսությունների մասին: Կազմակերպել զրույցներ, գրքերի, ֆիլմերի, ներկայացումների քննարկումներ, ականավոր մտավորականների ու հասարակական գործիչների հետ հանդիպումներ, էքսկուրսիաներ, դիտել կտավներ, կիրառական արվեստի գործեր, լսել երաժշտություն:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ծանոթացնել համաշխարհային մշակույթի նվաճումներին, մարդկային մշակույթի արժեքներին: Սովորեցնել հասկանալ շրջակա աշխարհի, բնության գեղեցկությունը: Կազմակերպել այցելություններ թանգարան, թատրոն, գեղագիտական կենտրոններ, դիտել ֆիլմեր, լսել երաժշտություն: Կազմակերպել արշավներ, էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Զրույցներ վարել հայրենիքի, նրա պաշտպանության շուրջ: Սովորողի մոտ զարգացնել հայ ժողովրդի ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանք ու հպարտության զգացմունք: Կազմակերպել ռազմահայրենասիրական ֆիլմերի դիտում, երգերի ունկնդրում: «Ինչից է կախված իմ ազգի և պետության ապագան» կարգախոսի արմատավորում:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել երեխաների ֆիզիկական զարգացմանում առողջության պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ մրցույթներ, օլիմպիադաներ, արշավներ, էքսկուրսիաներ: Վարել զրույցներ առողջ ապրելակերպի մասին, սպորտով զբաղվելու անհրաժեշտության մասին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Սովորեցնել երեխաներին բարեխղճորեն, ստեղծագործաբար մոտենալ ցանկացած աշխատանքի: Զրույցներ վարել աշխատասիրության մասին, սովորեցնել ճիշտ պլանավորել օրը, ներգրավել արտադասրանային աշխատանքի մեջ: Երեխային ցույց տալ, համոզել, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, որ աշխատանքն է պարգևում ուրախություն, ինչպես նաև նյութական պահանջներն է բավարարվում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, գիտակցեն էկոլոգիապես մաքուր միջավայրում առողջ ապրելու կարևորությունը, իրազեկ լինել դրանց պահպանման ուղիներին: Զարգացնել հոգատար վերաբերմունք բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ:

4. Դպրոց-ընտանիք կապը

Ծանոթանալ աշակերտների ընտանիքների հետ, նրանց ընտանեկան պայմաններին: Ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ, բարձրացնել աշակերտի ուսուցման արդյունքների համար ծնողի պատասխանատվությունը: Ծնողի և աշակերտի համատեղ մասնակցությամբ անցկացնել միջոցառումներ: Ծնողական ժողովների, խորհրդատվության միջոցով պահպանել մշտական կապ, անհրաժեշտության դեպքում համագործակցել հոգեբանի հետ:

IXա ԴԱՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1	Դասարանի ակտիվի ընտրություն, հերթապահության սահմանում, կազմակերպչական հարցերի քննարկում	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
2	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
3	<<Եթե ես լինեի ...>> թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
4	<<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ կարողություններն են ավելի զարգացած:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
5	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	սեպտեմբեր հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
6	<< Բնական պաշարներ >> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ:	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
7	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	Հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
8	<< Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
9	<< Էկոլոգիական հիմնախնդիրներ >> : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
10	<< Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>> ասոցացնել հին և նոր դասը տալ խնդրին նոր լուծումներ:	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
11	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժե համակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	Նոյեմբեր	աշակերտ դասղեկ
12	<< Գնահատվող մրցույթ >> թեման հնարավորություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքները:	նոյեմբեր	աշակերտ դասղեկ

13	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	Դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
14	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
15	<< Ազգ և պետություն >> թեմայով բաց քննարկում և վերլուծություն:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
16	<< Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
17	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	հունվար	աշակերտ դասղեկ
18	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	հունվար	աշակերտ դասղեկ
19	<< Լրատվամիջոցներ և կերպարներ >> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը:	հունվար	աշակերտ դասղեկ
20	<< Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:	փետրվար	աշակերտ դասղեկ
21	<< Ինչպես վարվել աղրի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղրի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	փետրվար	աշակերտ դասղեկ
22	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ:	փետրվար	աշակերտ դասղեկ
23	<< Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը կհասկանան թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ:	Փետրվար	աշակերտ դասղեկ
24	<< Ինչ է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	մարտ	աշակերտ դասղեկ
25	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները	մարտ	աշակերտ դասղեկ

26	<< Գնահատվող մրցույթ >> աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները կկարողանան խմբում հաջողությունն ապահովելու համար:	մարտ	աշակերտ դասղեկ
27	<< Նախապաշարումների ոստյան >> ներկայացնել թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել:	մարտ ապրիլ	աշակերտ դասղեկ
28	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	ապրիլ	աշակերտ դասղեկ
29	<< Պետք է արդյոք, խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	ապրիլ	աշակերտ դասղեկ
30	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	ապրիլ	աշակերտ դասղեկ
31	<< Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ հարգանք մարդասիրություն:	ապրիլ մայիս	աշակերտ դասղեկ
32	<<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	մայիս	աշակերտ դասղեկ
33	<< աշխատակից ենք ընտրում >> սովորողները կհասկանան՝ թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ , այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ , որ կարևոր են բոլոր մասնագիտությունները:	մայիս	աշակերտ դասղեկ
34	<< Վերջին զանգ >> խորագրով գեղարվեստական ցերեկույթի կազմակրպում	մայիս	աշակերտ դասղեկ